

ՀԱՅՐԵՆԻՔ – ՄՓՅՈՒՔ

ՀԱՆՂԻՊՈՒՄ ԹՈՎԱՍԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԵՏ

Վերջերս Դոնի Ռոստով էր ժամանել «Մայաթ-Նովա» աշուղական երգի վաստակավոր անսամբլը: Անսամբլի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ, բանասիրական գիտությունների թեկնածու, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, «Մայաթ-Նովա» մշակութային միության ղեկավար, բանահավաք, ժողովրդական և աշուղական երգերի կատարող Թովաս Պողոսյանի հետ զրուցել է հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Պետանյանը:

– Մեծարգո պարոն Պողոսյան, ուրախ ենք ողջունել Ձեզ Դոնի հյուրընկալ երկրամասում: Պարոն Պողոսյան, տարիների հեռվից գնահատելով Ձեր անցած ճանապարհը ինչպես և կներկայացնեք այսօրը:

– Շատ տարողունակ հարց էր տալիս: Լախի անտե, որ մեծ հպարտությամբ ենք եկել այստեղ, գիտե՞ք Լախիցան քաղաքի պատմությունը, որտեղ մեր նախնիները վերաբնակվել են մասնավորապես Լրիմից:

Միքելի Լուսինե, կյանքս նվիրել եմ հայ աշուղական արվեստին: Ես ծնվել եմ հոգևորականի տոհմում և սովետական տարիներին մեր տանը, մշտապես, գաղտնի աղոթք է հնչել: Ամեն ամսավրտ, մենք դեռևս մահձակայի մեջ, աղոթում էինք ու նոր անցնում մնացած գործերին, և այդ մասին ոչ – ոք չգիտեր: Ես ընում էի տատին կողքին և հիշում էմ, թե ինչպես էի երգում նրա հետ այդ աղոթքները: Տատս նաև շատ լավ գիտեր աշուղական հեքիաթներ, նրանց երգերը: Հայրս հրաշալի երգում էր, հորերայրս թան էր նվագում: Մի խոսքով, մեծացել եմ աշուղական արվեստի միջավայրում:

– Եվ, բնականաբար, չէր կարող այս ամենը իր հետքը չթողնել Ձեր հետագա և այսօրվա գործունեության վրա:

– Այո, այդպես էլ կա: Մտացվեց այնպես, որ իմ գիտակցական կյանքը նվիրեցի հայ աշուղական արվեստին: Բմ գիտական երկու

աշխատանքը թեկնածուականը և դոկտորականը նվիրված են աշուղ Ջիվանուն:

– Պարոն Պողոսյան, 21-րդ դարի մարդը, անկախ իր ազգությունից, բնեացած է կոլտնային արժեքների վրա: Այսօրվա հեռուստատեսության ծրագրի մեջ մեծ մասամբ անհետաքրքիր ու անիմաստ հեռուստահաղորդումներով և անորակ նախագծերով, որոնք հիմնականում անպակասում են մեր երիտասարդությանը՝ մղելով դեպի հեռավոր անդունդը: Արդյոք ի՞նչու է աշխատել ներկայիս այնպիսիներում, հատկապես այսօրվա հեռուստատեսություններում և այլ նախագծերում:

– Ցավով եմ ասում, որ շատ դժվար է: Մեր ազգային երգը, ավաղ, խեղաթյուրվում է: Եվ այս ամենից մի էլք կա, որ երկրիս բարձրագույն իշխանությունը դեմքով շրջվի դեպի ազգային մշակույթի ակունքները: Մենք ներքինից այսքան հոգ ենք տանում, իսկ արդյունքը չի բավարարում մեզ:

– Պարոն Պողոսյան, այսօր ինչ չն է Ձեզ ամենաշատը անհանգստացնում մեր երկրում: Ըստ Ձեզ, ո՞ր է մեր ժամանակի ամենամեծ վտանգը:

– Արտագաղթը: Մեր ժողովուրդը հեռանում է իր հայրենիքից և նոր վայրերում բոլոր դեպքում ձուլվում, ձուլվում, ձուլվում ու ... վերանում: Մեր համայնքները առավելապես ամուր և իսկապես անկան երկրներում, որովհետև

փոխադարձ ամուսնություններ գրեթե չկան, իսկ քրիստոնյա երկրներում պատկերը բոլորովին այլ է, չհասկանալով մենք կորցնում ենք մեր ինքնությունը:

– Մշակույթը ներկայացնում է տվյալ ժողովրդի դիմագիծը, պարոն Պողոսյան, կարո՞ղ էր այսօր պարզեցնել մեր մշակույթով:

– Անշուշտ, մենք հազարավայելների պատմություն, գիտություն և արվեստ ունեցող ազգ ենք: Եթե բոլորին սիշենք, ապա բավական է միայն նշել, թե աշխարհին ինչ մեծություններ ենք տվել: Լարեկյացի, Շնորհալի, Մայաթ-Նովա, Կոմիտաս, Խաչատրյան, Բարսեղյան, Սարյան, Ազնավուր և այլն: Հպարտանալու շատ բան ունենք:

– Այսօր, ինչպես տեսնում ենք, ազգային երաժշտությունն ու փողոցայինը, ռեստորանն ու բեմի խառնվել են իրար: Հասարակությունը, Ձեր կարծիքով, ինչի վրա է բեռնված:

– Հասարակությունը, լայն առումով, բեռնված է հարսանիքի մակարդակի երաժշտության վրա: Բայց նաև ունենք բարձրաճաշակ երիտասարդություն, ովքեր լավագույնս տիրապետում են ազգային մշակույթին, առաջադեմ քաղաքակրթության ձեռքբերումներին և նրանք դեմքով շրջվել են դեպի ազգային մշակույթի ակունքները: Համենայն դեպս, մեր այդպես էմ ուզում տեսնել մեր երիտասարդությանը: Մա էլ ինձ հույս է տալիս, որ վաղը



ավելի լավ կլինի, քան այսօրը: Ես հավատում եմ մեր վաղվա լուսավոր օրվան:

– Ինչպես էք տեսնում, մեր անփոխարինելի հայրենիքի Հայաստան երկրի ապագան:

– Շատ լավ եմ տեսնում: Դարեր ի վեր հայ ժողովուրդը մաքառել է, պայքարել է իր գոյության, իր վաղվա օրվա համար: Եվ տեսնելով մեր հրաշք նորոյա սերնդին ես վստահ եմ, որ մեր երկրի ապագան հուսալի ձեռքերում է:

– Պարոն Պողոսյան, փիլիսոփաներից մեկն ասել է. «Եթե ուզում ես խավարը գրել մի մոլ վառիկ»: Մենք հայրենիքից դուրս գտնվող ուսուցիչներ, ջանք ու եռանդ չենք խնայում, որ մեր երիտանների մեջ վատ պահենք հայրենիքի նկատմամբ սերը: Ձեր այսօրվա համերգը ևս մեկ լույս է դառնալու նրանց առկա ծրագրերին, քանի որ նրանց մեծ մասն այսօր դառնում է լինելու:

Ի դեպ, նրանք իրենց տատիկների և պապիկների հետ են եկել, որոնք հոգու թրթռոնով ու կարոտով են սպասել այսօրվան: Կենտրոնի, որ համերգի վերջում, բեմից մեր երեխաներին ոգեշնչող Ձեր մաղթանքները հղեցի: Զուտեսկած անկենցալ կլինի նրանց համար:

– Իհարկե, սիրելի Լուսինե, անպայման կհնչեցնեմ նրանց իմ խոսքը: Ես ցանկանում եմ, որ հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը անսասան լինի, որ դուք կարողանաք այստեղ անվտանգ ապրել, արարել, քստեծել, բայց հոգով ու սրտով միշտ կապված լինել Մայր հայրենիքին: Թող ձեր վերջին համագրվանք լինի Հայաստանը, որ գաք ու շենացնեք ձեր պատկանական օջախները:

– Այդպես էլ կլինի: Շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար: Հարցազրույցը պատրաստեց Լուսինե ՊԵՏԱՆՅԱՆԸ



ԿՈՄԻՏԱՍ – 150

(Սողոմոն Գևորգի Սողոմոնյան 1869-1935)

Սեպտեմբերի 26-ը Կոմիտաս Վարդապետի ծննդյան օրն է: Հայ երգահան, երգիչ, երաժշտական էթնոլոգ, երաժշտագետ, վարդապետ և ուսուցիչ, բանահավաք, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր:

Ծնվել է Քյոթահիայում: Որբանալով վաղ տարիքում 1881 թվականին 12-ամյա Սողոմոնը Քյոթահիայի հոգևոր առաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյանի հետ մեկնում է Սուրբ Էջմիածին և սկսում ուսանել Գևորգյան ճեմարանում: 1895 թվականին ձեռնադրվում է վարդապետ, որից հետո մեկնում է Թիֆլիս և վեց ամիս հարմունիա է ուսանում Մակար Եկմայանի մոտ: Սովորում է Բեռլինում պրոֆեսոր Ռիչարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում: 1899 թվականին Կոմիտասը վերադառնում է Էջմիածին:

Նա հավաքել ու գրի է առել ավելի քան 3000 հայկական ժողովրդական երաժշտության նմուշ, որոնցից միայն կեսն է հետագայում պահպանվել: Նրա երգչախումբը աշխարհի շատ բեմերում է ներկայացրել հայկական երաժշտությունը արժանանալով նաև Կոլո Դեբյուսիի գովասանքին: Կոմիտասին ջերմորեն ընդունել են հայկական համայնքներում,

իսկ Արշակ Չոպանյանը նրան անվանել է «հայկական երաժշտության փրկիչ»: Հայոց ցեղասպանության ժամանակ 1915թ. ապրիլին, շատ մտավորականների հետ մեկտեղ օսմանյան կառավարության կողմից Կոմիտասը ձերբակալվում է և արտորվում բանտարկյալների ճամբար: Նրան շուտով ազատում են, սակայն հայերի զանգվածային կոտորածների մասին լուրերը շարունակում են խաթարել նրա զգայուն հոգեկան վիճակը: Մինչև 1919 թվականը նրան սկզբում տեղավորում են թուրքական ռազմական հոսպիտալում, իսկ հետո տեղափոխում Փարիզի հոգեբուժարաններ, որտեղ էլ տառապանքների մեջ անց է կացնում իր կյանքի վերջին տարիները: Այստեղ էլ հոկտեմբերի 22-ին 66 տարեկանում մահանում է Կոմիտասը: Նրան ընկալում են որպես ցեղասպանության գոհ և արվեստում պատկերում որպես ցեղասպանության հիմնական խորհրդանիշներից մեկը:

Դու – Վարդապետ: Դու Ամենայն Հայոց երգի Վեհափառն ես, Դու մեր երգի Մեծարդ Մաշտոց, Գիրն ու տառն ես Հայոց երգի: Հայոց երգի Անձին հերկի: Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես, Ե՛վ մատընտիր սերմը նրա, Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն էս, Որ ինչքան էլ ճղակրոտոր Շտկվել է ու բար է տվել, Ու մեր դարդը իրար տվել...

Եվ հայրենի այն ծիծառը, Որ հավիտյան բույն է դրել Մեր հոգու մեջ, Մեր կիսավեր ու դեռ կանգուն Տաճարների Ու մեր երկնի գմբեթի տակ...

Պարույր Սեակ

ՌԹԵՑԱՎԵՐ


Նորից երգում, մորմոքում է Աստվածային Կոմիտասը: Կախարդում է ու մոգում է Աստվածային Կոմիտասը... Ամենասուրբ դու նահատակ, Ամենահա յր, ավենահա յ, Գինու կարասն ուրիշներին, Մեզ հերիք է քո մի թաք...

Կոմիտասը համարվում է ժամանակակից հայկական դասական երաժշտության հիմնադիրը: Հայտնի է որպես երաժշտական ազգագրության ռահվիրաներից մեկը: «Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացել և սովորեք նրանից», – ասում էր Կոմիտասը:

Հայոց երաժշտության ինքնուրույնությունն ապացուցելու և ողջ գրավորությունը ներկայացնելու համար նա շատ է դեգերել, անցել գյուղից գյուղ, հավաքել և գրի առել հայ երգը իր մաքրամաքուր արմատներով: Լինելով մեծագույն մանկավարժ Կոմիտասն ուրույն պատերազմում ունի մանուկների դաստիարակության հարցում: «Եթե մանուկը չի հասկներ ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չէք կրցած հասկնալ անոր հոգին, պետք է որ իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրանալ: Միայն դաստիարակության արդյունք է, որ շատերը, որոնք հանձարներ պիտի ըլլային, եղած են գողեր... Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Միայն ուղղությամբ ազգ մը կխորտակեք վերջը...»

ԿՈՄԻՏԱՍԻ

Քո երգերը՝ սրտահովանք, սպեղանի, մոլորայի սիրակարոտ աղերսավեր են, Մեր հին ու նոր գարունների ծիրանի ծառ, կորունկի կա նչ ու չինարն են,



«Պատարագը» մեր մշտաբույն ու խնկաբույր աղոթքն է լուռ Ու բնավեր մեր օրրանի ողբի լացն է, ցավն է մրմուռ: «Հորովեղ» վաղամեռիկ մեր պապերի պաղ շուրթերին սառած երգն է, «Սոնա յարդ» նորահարսի լուռ փայփայած, բայց անկատար երազանքն է: Ու չճաղկեց քո գարունը, որ նոր սերեր պիտի վառեր, Արգասաբեր հողում հունդ պիտի նորից պտղավորվեր: Դու չիմացար, որ «Գարունդ» ամեն ապրիլ միլիոնավոր սրտեր վառում, Արցունք քաղում, դատավճռի թեք թեք ծվատում, դաք է ծեծում, Դու չիմացար ինչ դավերով այդ մարդասպան ռոտիլը չար, Ընդմիջտ կորզեց յն լքող, մի տղը, շնորհդ արդար: Քո երգերը՝ հայապահպան ու հայաստեղծ, մեր երեկը, այսօր, վաղն են, Հայաստիվոր մեծ աշխարհում հոգեբաղձանք ու ոգեշնչող շարական են, Դու Կոմիտաս ս, եղեռնապարծ հայոց մտքի հանձարածին մեծ աշխարհն են, Հայոց թրծված ճակատագիր, Աստվածընծա սուրբ նշխարն են:

Անահիտ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ուսուցչուհի